



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N° 12-Լ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2011թ. ԱՊՐԻԼԻ 26-ի «ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ
ԿՆԻՔՆԵՐԻ, ԴՐՈՇՄԱԿՆԻՔՆԵՐԻ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ
ԳՈՐԾԻ ԷՋԵՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ
06-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասով և 43-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011թ. ապրիլի 26-ի «Դատավորների կնիքների, դրոշմակնիքների գծապատկերները և դատական գործի էջերի վավերացման կարգը հաստատելու մասին» թիվ 06-Լ որոշման 1-ին հավելվածում՝

1. Լրացնել ԼՂՀ Գերագույն դատարանի դատավոր Վոլոդյա Հովսեփյանի և ԼՂՀ վերաքննիչ դատարանի դատավոր Կարեն Ղարայանի անվամբ կնիքների գծապատկերները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ԼՂՀ Գերագույն դատարանի դատավոր Կարեն Ղարայանի և ԼՂՀ վերաքննիչ դատարանի դատավոր Վոլոդյա Հովսեփյանի անվամբ կնիքների գծապատկերները:

**ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ԱՎԱԳՅԱՆ